Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.
պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:
Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

240 1925
513

# ՀՐԱՄԱՆ

## Ս. Խ. Հ. Մ. ՌԱԶՄԱ-ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

**10 նոյեմբերի 1924 թ. № 1397**

Հայտարարվում է ի ղեկավարություն Բ.-Գ.Կ.Բ. նետեվակի ժամանակավոր մարտական կանոնագրքի առաջին մասի լրացումները և փոփոխությունները։

*1) Նկատի ունենալով, որ հրաձիգ և ձեռքի գնդացիրների ողակները վերակոչված են հրաձիգ և ձեռքի գնդացիրների ջոկեր, ուստի ամբողջ կանոնագրքում, բացի X-րդ գլխից, «ողակ» բառը փոխել «ջոկ» բառով. «ջոկ» բառը վերացնել։*

*2) Հրաձիգ և ձեռքի գնդացիրների ջոկերի վարժությունը կատարել IV գլխի ցուցումների համաձայն, ստորև բերված փոփոխություններով*

513 - ԱԳՀ

| Գոյություն ունեցող շարադրությունը. հոդ. 20 կետ ա)։ | Համառոտված փոփոխությունը. հոդ. 20 կետ ա)։ |
|---|---|
| ա) Ողակը հավաքելու համար — ողակ «ԻՆՉ ՄՈՏ» | ա) Ջոկը հավաքելու համար — ջոկ «ԻՆՉ ՄՈՏ»։ |
| Հրաման տալուց հետո, ողակի հրամանատարը կանգնում է, յերեսը դարձնելով ցանկացած ուղղությամբ։ Մարտիկները, ըստ հնարավորության, արագ, բայց անշփոթ և անաղմուկ, կանգնում են իրենց հրամանատարի յետևում զուգաշար սյունով այնպես, վոր ճիշտ հեռակայությունների ու | Հրաման տալուց հետո, ջոկի հրամանատարը կանգնում է, յերեսը դարձնելով ցանկացած ուղղությամբ։ Մարտիկները, ըստ հնարավորության, արագ, բայց անշըփոթ և անաղմուկ, կանգնում են իրենց հրամանատարի յետևում միաշար սյունով այնպես, վոր ճիշտ հեռակայությունների վրա |

միջանցների վրա լինելով, իրենց առջևում կանգնածի գլխի յետևից մյուսների գլուխը չը տեսնեն և իրար կողքի կանգնած մարտիկների թաթերի ծայրերը լինեն մի գծի վրա։

Յուրաքանչյուր մարտիկ «ԶԳԱՍՏ» հրամանի դրությամբ, ինչպես ասված է 16-րդ հոդվածում։

լինելով, իրենց առջևում կանգնածի գլխի յետևից մյուսների գլուխը չը տեսնեն։

Յուրաքանչյուր մարտիկ «ԶԳԱՍՏ» հրամանի դրությամբ, ինչպես ասված է 16-րդ հոդվածում։

3) Հաստոցավոր գնդացիրների ջոկերը հրաձիգ դասակներում սովորեցնել VII գլխի համաձայն։

4) Հրաձիգ վաշտում հաստոցավոր գնդացիրների դասակը սովորեցնել VIII գլխի համաձայն։

5) Հրաձիգ դասակները և հրաձիգ

ինաշարը սովորեցնել ներքևում բերված V, VI գլուխների և հավելված I ինի նոր խմբագրության համաձայն։

6) XII-րդ գլխի մեջ մտցնել հետևյալ փոփոխությունները․

| Գոյություն ունեցող շարադրությունը։ Հոդ. 57, կ. 1. | Առաջարկված փոփոխությունները։ Հոդ. 57, կ. 1. |
| --- | --- |
| Մարտիկների (տողանների) միջև հեռակայությունը — մեկ ու կես քայլ է, քառաշար սյունում ջոկերի միջև հեռակայությունը հավասար է ողակի զուգաշար սյունի խորությանը։ Տողաններում մարտիկների միջև միջանցը յերկու քայլ է, հաշվելով հարևան հեծանիվ | Մարտիկների (տողանների) միջև հեռակայութունը — մեկ ու կես քայլ է՝ քառաշար սյունով միավորության մասերի միջև—6 քայլ։ Տողաններում մարտիկների միջև միջանցը յերկու քայլ է, հաշվելով հարևան հեծանիվների անվներից։ |

ների ակներից. գծաշարում ջոկերի միջև—6 քայլ է։

Գծաշարով դասավորած միավորության մասերի միջև միջանցները — 6 քայլ է։

**Գոյություն ունեցող շարագրությունը։**

**Հոդ. 58, կ. 1.**

Մարտիկների (տողանների) միջև հեռավորությունը 8 քայլ է, քառաշար սյունով ջոկերի և զուգաշար սյունով ողակների միջև— զուգաշար սյունով ողակի խորության չափով։

Տողաններում մարտիկների միջանցը յերկու քայլ է, գծաշարում ջոկերի միջև—12 քայլ։

**Հաստատված փոփոխությունները.**

**Հոդ. 58, կ. 1.**

Մարտիկների (տողանների) միջև հեռավորությունը 8 քայլ է, քառաշար սյունով միավորության մասերի միջև —12 քայլ։

Տողաններում մարտիկների միջանցը յերկու քայլ է, գծաշարում միավորության մասերի միջև —12 քայլ։

7) Բացի վերոյիշյալ փոփոխություններից, V (դասակ), VI (վաշտ) գլուխները, հավելված № 1-ը (մշա-

կան շարային կազմակերպություն չունեցող միավորությունների համրանքը) փոխել սույն հրամանի առդիրում շարադրված համապատասխան բաժիններով։

Ս. Խ. Հ. Մ. Ռազմա հեղափոխական Խորհրդի նախագահի տեղակալ՝

ՖՐՈՒՆԶԵ

№1397 հրամանի առգիրը:

## ԳԼՈՒԽ V.

## ԴԻՍԱԿ.

25. Դասակի հրամանատարը ղեկավարում է.

Դասակի շարքերը—առավելապես հրամանների, նշանների և ազդանշանների միջոցով:

Դասակի կարգերը—առավելապես պատվերների միջոցով, վորոնք տրվում են անմիջապես կամ կապավորների ոգնությամբ: Սակավ դեպքերում հրամանների, նշանների և ազդանշանների միջոցով:

26. Ջոկերի շարքերի միացումով կազմվում են դասակի շարքերը.

| Դասակի շարքերը. | Հրաձիգ և ձեռքի գնդացիրների ջոկերի շարքերը. | Հրաձիգ և ձեռքի գնդացիրների ջոկերի փոխադարձ դրությունը. | Նկար. |
|---|---|---|---|
| Զուգաշար սյուն. | Միաշար սյուն. | Յերկրորդ և յերրորդ ջոկերն իրար կողքի, սրանց յետևից 4-րդ ջոկը 2-րդի ծոծրակին, 4-րդի կողքին 5 րդ ջոկը, 3-րդի ծոծրակին. | 7 |
| Քառաշար սյուն. | Միաշար սյուն. | Ջոկերն իրար կողքի №№-ների կարգով, աջից ձախ (2,3,4,5). | 8 |
| Գծաշար (տեղափոխվելու համար) | Միաշար սյուն. | Նույնը, ինչպես քառաշար սյունով | |

Առաջին, հաստոցավոր-գնդացրային ջոկը, բոլոր սյուների մեջ շարժվում է դասակի առում, 6 քայլ հեռավորության վրա, իսկ գծաշարում տեղավորվում է հրաձիգ և ձեռքի գնդացիրների ջոկերից ձախ, 6 քայլ միջանց թողնելով։

Առաջին ջոկի մարտիկները — № 11 նկարում ցույց տրված կարգով, չփոխելով իրենց տեղերը դասակի շարափոխությունների ժամանակ։

27. Դասակի հրամանատարը, դասակի շարքերի ղեկավարության ժամանակ, տալիս է հետևյալ հրամանները՝

ա) Դասակը հավաքելու համար՝

Դ սակ—«ԻՆՁ ՄՈՏ»

Ջոկերի հրամանատարները, և նրանց հետևից նրանց մարտիկները, բռնում են իրենց տեղերը քառաշար սյունի մեջ։

բ) Քառաշար սյունը զուգաշար սյունի փոխելու համար՝

Տեղից՝

զուգաշար, քայլով(վազով)—«ՄԱՐՇ»։

Շարժվելիս՝

Զուգաշար կազ—«ՄԻՐ» (վազով)։

Երկրորդ և յերրորդ ջոկերը շարժվում են ուղիղ դեպի առաջ, նրանց յետևից, աստիճանաբար տեղ բացվելուց հետո, ձգվում են 4-րդ և 5-րդ ջոկերը, իսկ սրանց յետևից 1-ին ջոկը։

Հակառակը՝

Զուգաշար սյունը քառաշար սյունի փոխելու համար՝

Տեղում և շարժվելիս՝

Քառաշար կազ -«ՄԻՐ» (վազով)։

Երկրորդ և յերրորդ ջոկերը, մնում են տեղում (գնալիս դանդաղեցնում են շարժումը)։

Չորրորդ և հինգերորդ ջոկերը դեպի ձախ դուրս գալով, համասարվում են առաջիններին ու կանգ առնում (շարժվելիս դանդաղեցնում են շարժումը)։

Առաջին ջոկը մոտենում է նախորդներին 6 քայլ հեռավորության վրա։

Այնուհետև, շարժման ժամանակ շարափոխություն կատարելու դեպքում, դասակի հրամանատարը հրաման է տալիս՝

Լիաքայլ, կամ կանգնեցնում է դասակը (հոդ. 20 կետ դ.)։

գ) Քառաշար սյունը գծաշարի փոխելու համար՝

Տեղում և շարժվելիս՝

Գծաշար կազ—«ՄԻՐ» (վազով)։

Երկրորդ, երրորդ, չորրորդ և հինգերորդ ջոկերը մնում են տեղում (շարժվելիս կանգ են առնում)։

Առաջին ջոկը, ձախ դուրս գալով մնացած ջոկերի գիծը, 6 քայլ միջանց թողնելով, կանգ է առնում, հետևելով իր հրամանատարի օրինակին։

դ) Զուգաշար սյունը գծաշարի փոխելու համար՝

Տեղում և շարժվելիս՝

Գծաշար կազ – «ՄԻՐ» (վազով)։

Երկրորդ և երրորդ ջոկերը մնում են տեղում (շարժվելիս կանգ են առնում)։

Չորրորդ և հինգերորդ ջոկերը, ձախ դուրս գալով նախորդների գիծը, կանգ են առնում։

Առաջին ջոկն առաջ է շարժվում ու բռնում իր տեղը գծաշարում, 5-րդ ջոկից ձախ, 6 քայլ միջանց թողնելով։

Հակառակը՝ գծաշարից զուգաշար սյուն կազմելը՝

Տեղից՝

Զուգաշար (վազով) «ՄԱՐՇ»։

Շարժվելիս՝

Զուգաշար կազ—«ՄԻՐ» (վազով)։

Յերկրորդ և յերրորդ ջոկերը շարժվում են ուղիղ դեպի առաջ. Նրանց յետևից, աստիճանաբար տեղ բացվելուց հետո, հաջորդաբար շարժվում են 4-րդ և 5-րդ ջոկերը, իսկ սրանց յետևից 1-ին ջոկը։

Հակառակը՝ գծաշարից քառաշար սյուն կազմելը՝

Տեղից՝

Քառաշար (վազով) «ՄԱՐՇ»։

Շարժվելիս՝

Քառաշար կազ—«ՄԻՐ»(վազով)։

Երկրորդ, յերրորդ, չորրորդ և հինգերորդ ջոկերը շարժվում են ուղիղ դեպի առաջ. առաջին ջոկը, տեղ բացվելուն պես, ձգվում է նրանց յետևից, 6 քայլ հեռավորություն թողնելով։

Դասակը գծաշարից քառաշար սյունի փոխելու համար, ուղղությունը $^1/_4$ շրջան աջ փոխելով, արվում են վերևում ցույց տրված հրամանները, առաջուց արտասանելով՝

Դեպի աջ։ (Արտասանել յերկար)։

Երկրորդ, յերրորդ, չորրորդ, և հինգերորդ ջոկերը շրջվում են $^1/_4$ շըրջան աջ, իսկ սրանց յետևից նաև առաջին ջոկը, տեղ բացվելուն պես, և շարունակում են շարժումը նոր ուղղությամբ, մինչև դասակի հրամանատարի հրամանը՝

Ուղղապահ կանգ—«Ս.Ռ»։

Դասակի հրամանատարը դասակը համապատասխանեցնում է, արձակում է, առաջ է շարժում, արագացնում կամ դանդաղեցնում է շարժումը, դարձնում,

տեղափոխում, կանգնեցնում է 20-րդ հոդ. Ջոկի հրամանատարի համար ցույց տրված հրամաններով, միայն, երբ հարկավոր է, «Ջոկ» բառը փոխարինելով «դասակ» բառով։

Կատարվում է այդ հատվածի ցուցումների համաձայն։

28. Վաշտի բացազատումից հետո, դասակները սովորաբար շարունակում են շարժումը զուգաշար սյունով, սակավ դեպքում ոձաշարով։

Դասակի բացազատումից հետո, ջոկերը սկզբնական շարժումը շարունակում են միաշար կամ զուգաշար սյունով, հետո ծավալվում են ոձաշարի և երամաշարի։

29. Դասակի հրամանատարը կարող է դասակի ընդհանուր սյունից առանձնացնել, մի քանի ջոկ հետագա շարժման յեվ գործողությունների համար, դասակի հրամանատարի ոգնականի անմիջական ղեկավարությամբ։

Դասակի հրամանատարի ոգնակա-

կանը դասակի ընդհանուր սյունից դուրս է բերում այդ ջոկերը, դասակի հրամանատարի ցույց տված ուղղությամբ հետագա շարժման համար, հրաման տալով՝

Այսինչ ջոկերը, լսիր իմ հրամանը.

Զուգաշարով (միաշարով) «ԻՆՁ ՀԵՏԵՎԻՐ»։

Հետագայում դասակի հրամանատարի ոգնականն իրեն անմիջապես յենթակա ջոկերը ղեկավարում է 30 հոդ. ցուցումների համեմատ։

30. Բացազատման համար տրվելիք պատվերում դասակի հրամանատարը ցույց է տալիս։

1) Առաջիկա գործողությունների նպատակը.

2) Ուղղությունը.

3) Ուղղապահ մասը.

4) Մասերի փոխադարձ դրությունը և կարգերը (շարքերը).

5) Հեռակայություններն ու միջանցները.

6) Ապահովության միջոցները.

Կատարումն սկսվում է դասակի հրամանատարի «ՋԱՏՎԻՐ» հրամանով։

Ուղղապահը, այն ջոկի հրամանատարը, որի համեմատ կատարվում է բացազատումը, հրաման տալով—ինձ հետեվիր, իր ջոկը տանում է դասակի հրամանատարի ցույց տված ուղղությամբ։ Մնացած ջոկերի հրամանատարներն ամենակարճ ճանապարհով իրենց ջոկերը տանում են դասակի հրամանատարի ցույց տված ուղղությամբ, կամ կանգնեցնում են իրենց ջոկերը (տեղանքին հարմարվելով) պահանջված հեռավորություններն ու միջանցները թողնելու համար։

Հետագայում ջոկերի հրամանատարները տանում են իրենց ջոկերը, դասակի հրամանատարի բացազատման ժամանակ տված ցուցումների համաձայն, և համակերպում են իրենց շարժումը ուղղապահին։

Յուրաքանչյուր ջոկ իր հերթին բացազատվում է իր հրամանատարի նախաձեռնությամբ։

Ջոկերի բացազատումը թույլատրվում է դասակի հրամանատարի անմիջական պատվերով, ազդանշանով կամ նշանով։

Շարժումը, կանգառումները, ուղղության, հեռակայությունների և միջանցների փոխելը, դասակի տեղափոխությունը, ջոկերի փոխադարձ դասավորության փոփոխումը — կատարվում է դասակի հրամանատարի համապատասխան պատվերներով, որոնք տրվում են անմիջապես կամ կապավորների միջոցով։ Պատվերները կարող են լրացվել կամ փոխարինվել հրամաններով, նշաններով ու ազդանշաններով։

Վերջինները կարող են վերաբերվել բոլոր ջոկերին, կամ նրանցից մի քանիսին. յերկրորդ դեպքում նրանց նախորդում է հետևյալ ցուցումը՝

Այս ինչ ջոկը (ջոկերը)։

Դասակի հրամանատարը կրակը ղեկավարում է սույն կանոնագրքի 2 րդ մասի և հրաձգային կանոնագրքի մեջ առաջադրված հիմունքներով։

ԱՐԽԻՎ

Դասակը բացագատված դրությունից հավաքվում է՝ ըստ այսինչ ջոկի— «ՀԱՎԱՔՎԻՐ» պատվերով։

Ջոկերի հրամանատարներն ամենակարճ ճանապարհով տանում են իրենց ջոկերն այն ջոկի մոտ, որի համեմատ կատարվում է հավաքը, և համարների կարգով շարվում են զուգաշար սյունով։

**Դասողություն.**— Ցեթե դասակի հրամանատարը ցույց չի տվել ջոկերով բացագատվելու կարգը, այլ միայն ուղղությունը ցույց տալուց հետո, զավիր հրաման (ազդանշան, նշան) է տվել՝ այդ դեպքում յերկրորդ ջոկը միշտ հանդիսանում է ուղղապահ։ Նա շարունակում է շարժումը դասակի հրամանատարի ցույց տված ուղղությամբ։

Յերրորդ ջոկը տեղավորվում է սրանից ձախ, թողնելով 100 (մոտավորապես) քայլ միջանց։

Չորրորդ և հինգերորդ ջոկերը, առջևում գնացողներից 200 (մոտավորապես) քայլ հեռավորություն թողնելով, միևնույն ժամանակ իրենց միջև մոտ

180 քայլ միջանք են թողնում (հինգերորդ ջոկը չորրորդից ձախ)։

Առաջին ջոկը շարունակում է շարժումը նախկին ուղղությամբ, հետագայում գործելով դասակի հրամանատարի հատուկ ցուցումով։

Դեպի թևի կողմը բացազատվելու ժամանակ, պետք է հրաման տալ՝

Դեպի աջ (ձախ) — «ՁԱՏՎԻՐ»։

Կատարվում է վերոհիշյալի համաձայն։

Ջոկերի հրամանատարները շարժման ժամանակ ուղղությունը փոխում են, շրջվելով $1/4$ շրջան դեպի աջ (ձախ)։

31. Երբ հրաման է տրվում ճանապարհից—«ԱՋ» («ՁԱԽ»)։

Սյունն արագ դուրս է վազում ճանապարհից, աջ կամ ձախ, ու շարունակում շարժումը։

Երբ հրաման է տրվում ճանապարհից.—«ԱՋ» ու «ՁԱԽ»։

Քառաշար սյունում յերկրորդ և յերրորդ ջոկերը դուրս են վազում ճանապարհից աջ, չորրորդ և հինգերորդ— ձախ, ու շարունակում շարժումը։

«ԿԱՆԳԱՌ» հրամանով բոլորն արագ կանգ են առնում։

«ՊԱՌԿԻՐ» հրամանով—բոլորն արագ պառկում են, զենքն իրենց կողքին դնելով։

Ճանապարհով— «ՄԱՐՇ» հրամանով—վերադառնալով ճանապարհը, վերականգնում են նախկին սյունը։

**Ծանոթություն.**—Քառաշար սյունով շարժման ժամանակ, առաջին ջոկը ճանապարհից դուրս է գալիս միայն դասակի հրամանատարի հատուկ ցուցումով։

## ԳԼՈՒԽ VI

## ՎԱՇՏ

32. Վաշտի հրամանատարը ղեկավարում է՝

Վաշտի շարքերը — առավելապես պատվերների միջոցով. վաշտի կարգերը—բացառապես պատվերների միջոցով, սույն կանոնագրքի 2-րդ մասում բացատրված հիմունքներով։

33. Վաշտի շարքերը կազմվում են դասակների շարքերի միացումից։

Վաշտը շարվում է՝

Յերթի համար — յերթասյունով՝ դասակները մեկը մյուսի յետևից, 3 քայլ հեռավորությամբ, հրաձիգ դասակները և վարչական դասակը քառաշար սյունով։

Հրաձիգ դասակների առաջին ջոկերը (հաստոցավոր գնդացիրներ) և գնդացրային դասակը յերթում շարժվում են հրաձիգ դասակների յետևից, միաշար սյունով, հետևյալ հաջորդականությամբ՝

Առաջին դասակի առաջին ջոկը, յերկրորդ դասակի առաջին ջոկը, յերրորդ դասակի առաջին ջոկը, գնդացրային դասակը, սրանց յետևից վարչական դասակը։

Հավաքի համար՝ ուզած ամեն մի կարգով, սակայն գլխավորապես վաշտը շարվում է՝

Վաշտասյունով՝ — դասակները իրար կողքի, աջ թևից հաշված, հետևյալ հաջորդականությամբ՝

Առաջին, յերկրորդ, յերրորդ, չոր-

րորդ դասակները և վարչական դասակը։

Հրաձիգ դասակները և վարչական դասակը—քառաշար սյունով. հաստոցավոր գնդացիրների դասակը—միաշար սյունով։

Դասակների միջև միջանցը—3 քայլ։

34. Վաշտի հավաքի համար, վաշտի հրամանատարը, ցույց տալով նպատակը, ուղղությունը, հավաքի տեղը, դասակների շարքերն ու փոխադարձ դասավորությունը, հրաման (նշան, ազդանշան) է տալիս։

«ՀԱՎԱՔ»։

Դասակների հրամանատարները, դասակները հավաքելով, տանում են նրանց ամենակարճ ճանապարհով հավաքի տեղը ու դասավորում վաշտի հրամանատարի ցուցումների համաձայն։

Եթե այդպիսի ցուցումներ չեն տրված, «ՀԱՎԱՔ» հրամանով վաշտասյուն է կազմվում։

Վաշտասյունը յերթասյունի փոխելու համար, վաշտի հրամանատարը հրաման է տալիս.

Շարժվելիս՝

Յերթասյուն կազ—«ՄԻՐ»:

Տեղից՝

Յերթասյուն, քայլով —«ՄԱՐՇ»:

Յեթե դասակների շարժման հաջորդականությունը ցույց չի տրված, առաջին դասակի հրամանատարը տանում է իր դասակն ուղիղ դեպի առաջ: Մնացած դասակները, համարների կարգով, գնում են առաջինի յետևից, տեղ բացվելուն պես:

Հրաձիգ դասակների առաջին ջոկերը (հաստոցավոր գնդացիրները) մնում են տեղում և հետո ձգվում են յերրորդ դասակի յետևից, 33 հոդ. յերթում շարժման համար ցույց տված հաջորդականությամբ:

Նրանց յետևից շարժվում են գնդացրային և վարչական դասակները:

Յերթասյունը վաշտասյունի փո-

խելու համար, վաշտի հրամանատա-
րը հրաման է տալիս՝

Շարժվելիս և տեղում՝

Վաշտասույն կազ—«ՄԻՐ»։

Առաջավոր դասակը կանգ է առ-նում (մնում է տեղում)։ Մնացած դասակները իրենց հրամանատարի օրինակով, ամենակարճ ճանապարհով դուրս են գալիս առաջավորի գիծը, 33 հռդ. իրենց ցույց տված տեղերն ու կանգ առնում։

Միաժամանակ հրաձիգ դասակների առաջին ջոկերը (հատոցավոր դնդացիրները) առաջանում են իրենց տեղերը վաշտայունի մեջ։

Յերթայունը սկզբնական ուղղությունը փոխելով, վաշտայունի շարափոխելու համար, վաշտի հրամանատարը յերթայունի գլուխն առաջուց դուրս է բերում նոր ուղղությամբ։

# ՄՇՏԱԿԱՆ ՇԱՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԻԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄՐԱՆՔԸ

Համրանք կատարողը, նշանակելով ջոկերի (յեթե հարկավոր է նաև դասակների) հրամանատարների պարտականություններ կատարողներ (պարտակատարներ), հրաման է տալիս՝

Ուշադիր։

Կատարվում է ինչպես ասված է 16-րդ հոդվածում։

Կանգնիր։

Մարդիկ կանգնում են յերկտողան գծով, արմունկների միջև մի դաստակի չափ լայնության միջանցներով, հասակի կարգով, աջ թևից դեպի ձախը (աջ թևն ուղղած համրանք կատարողի դեմ, յերեսը դեպի նրան), յուրաքանչյուրը զգաստ դրությամբ, ինչպես ցույց է տրված 16 հոդվածում, այնպես, որ մի տողանի

բոլոր մարդկանց թաթերի ծայրերը լինեն մի ուղիղ գծի վրա։

Ջոկերի (դասակների) հրամանատարների պարտակատար նշանակվածները կանգնում են շարված մարդկանց առաջ միատողան գծով, երեսները դեպի նրանց, շարքի կենտրոնից 3 քայլի վրա։

Այնուհետև համրանք կատարողը, շարժվելով շարքի երկայնությամբ, աջ թևից դեպի ձախը, անձամբ կատարում է ջոկերի համրանքը յոթնյակներով կամ ութնյակներով։ Առաջին տողանի մարդիկ կազմում են կենտ համարով (առաջին, երրորդ) ջոկերը, իսկ երկրորդ տողանի մարդիկ—զույգ համարով (երկրորդ, չորրորդ)․ հինգերորդ ջոկը կազմվում է մնացած մարդկանցից։

Համրանք կատարողը հաջորդաբար աջ է դարձնում համրած ջոկերը, նշանակում է նրանց վրա ջոկերի հրամանատարների պարտակատարներ և նրանց ցույց է տալիս ջոկերը տանելու տեղը։

Այդպես կազմվում է զուգաշար սյուն, որը շարափոխվում է, հետո շարժվում, տեղավորվում է և այլն, I-ին հատվածի ցուցումների համաձայն։

Համրանքը վերջանալուց հետո, համրանք կատարողը հրաման է տալիս՝ «ԱԶԱՏ», որից հետո ջոկերի հրամանատարների պարտականատար նշանակվածները հայտնում են մարդկանց նրանց համարները, իսկ դասակների հրամանատարների պարտականատարները ստուգում են ջոկերի համարները և բռնում իրենց տեղերը։

Համրանքից հետո շարքում գտնվողը պետք է իմանա՝ ով է իր անմիջական պետը, ովքեր են հարևաններն աջից ու ձախից, ով է կանգնած իր առաջ կամ ծոծրակին։

Իսկականը ստորագրեց՝ Բ.-Գ.Կ.Բ.
Հետևակի տեսչի պաշտոնակատար՝
ՊՈԻՏՆԱ

Իսկականի հետ ճիշտ է՝ Բ.-Գ.Կ. Բ. Հետևակի տեսչի օգնական՝
ԿՈՏՈՎ

«Բ.-Գ. կ. Բ. Հետևակի ժամանակավոր մարտական կանոնագրքի I մասում սպրդած սխալների ուղղումները

| Յերես | Տպված է. | Պետք է լինի. |
| --- | --- | --- |
| 18 | Վերևից 7-րդ տող-«ԿԱՑ» նշանից ձախ 2 (որինակ). | «ԿԱՑ» նշանից ձախ 2 (որինակ). |
| 106 | Ներքևից 7-րդ տող-զուգաշար սյունով | Միաշար սյունով |
| 107 | Վերևից 4 րդ տող-գունդը յերթայունով | Գունդը—դնդասյունով |
| Նկ.2 | Նշանառուի օգնականը ցույց է տրված — $\underline{\Phi}_2$ | $\Phi_2$ (նայիր պայմանական նշաններ)։ |



Նկ. 7. Հրաձիգ դասակը զույգաշար սյունով.



Նկ. 8. Հրաձիգ դասակը քառաշար սյունով

**Ծանոթություն.**— *Խաղաղ ժամանակի հաստիքով (ШТАТ) վարժանքները կատարելու ժամանակ, շարվածքները մնում են նույնը (համաձայն այս սքեմաների) միայն բացակա համարների տեղերը չեն բռնվում։*




Նկ. 11. Հաստոցավոր գնդացիրը սայլի վրա.

**Ծանոթություն**.— Խաղաղ ժամանակի հաստիքով (штат) համբանքներ կատարելու ժամանակ, շարվածքները մնում են նույնը (համաձայն այս սխեմաների) միայն բացակա համարների տեղերը չեն բռնվում:



ՀՀ Ազգային գրադարան
NL0835881

240

1925 թ.

-50-

Ա 92
513